

Մ Ի Ա Ի Ո Ր Ո Ղ Ո Գ Ի

Թումանեանը սիրում էր կրկնել Անգլիացի նշանաւոր քննադատ Գարլայլի խօսքերն այն մասին, թէ աշխարհով մէկ տարածուած, նոյնիսկ տարբեր աշխարհամասերում ինքնուրոյն պետութիւններ հիմնած անդլիական ցեղի վրայ իշխող, նրա ազգային միութիւնը պահպանող միայն մի ղեկավարը կայ, եւ դա Շէյքսպիրն է: Այո, արուեստի հանճարեղ վարպետները, արտայայտելով իրենց ժողովրդի ոգին եւ ճրատումները, դառնում են նրա ազգային նրկարարի լաւագոյն զօրքի խոսացման եւ պահպանման հզոր ուժ: Առաւել եւս դա վերաբերում է Հայ ժողովրդին, որը պատմական ճակատագրի բերումով զրկուել է միասնութիւնից, մասնատուել եւ ցրուել է աշխարհով մէկ:

Յովհաննէս Թումանեանն աւելի քան որեւէ ուրիշ Հայ գրող, իր ստեղծագործութեան մէջ կրում էր ազգային միաւորման այդ մեծ ոգին: Նա իրական ազգային բանաստեղծ էր ոչ միայն հարազատ երկրի ու ժողովրդի պատմական անցեալն ու ներկան ամենայն լայնութեամբ ընդգրկելու առումով, այլեւ մանաւանդ, իր բացառիկ խոր եւ իմաստուն հայրենասիրութեամբ: Թումանեանին խորթ էր Հայ ժողովրդի երկու մեծ հատուածները՝ արեւելասլաւոյթեան եւ արեւմտասլաւոյթեան, նրանց մշակոյթի եւ զբաղանդութեան որեւէ հակադրութիւն, մէկի գերադասում կամ նսեմացում միւսի հաշուին: Ամէն ինչ նա դիտում էր Հայ ժողովրդի, իրրեւ ազգային-քաղաքական ամբողջութեան ճակատագրի եւ հեռանկարների տեսակէտից: Հայոց պատմութիւնը, Հայ մշակութիւնը, հոգեբանութիւնը, «Հայոց վիշտը» բանաստեղծն ընկալում եւ զնահատում

էր իրենց իրական միասնութեան մէջ: Ամբողջ Հայ ժողովրդի պատմական բախոր նկատի ունէր Թումանեանը, երբ գրում էր. «Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի պատմական բախորը, էն սոսկալի տուաման, որ կոչոււմ է Հայոց պատմութիւն»:

Լինելով արեւելահայ գրող, Թումանեանը բազմիցս հարատութեամբ կրկնել է այն ուսանդութիւնը, որի համաձայն իր նախնիները դարեր առաջ Լոռի են եկել Արեւմտեան Հայաստանի Տարօն գաւառից:

Մինչեւ Առաջին Աշխարհամարտը, Թումանեանն անձամբ չէր եղել Արեւմտեան Հայաստանում: Բայց դեռ երիտասարդ տարիներին նա արեւմտահայութեան կենսքից պրկ է շատ բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ «Մեհհր» պոէմը: Այդ սամանակ է նա սկսել նաեւ իր «ազգային մեծ պոէման» — «Նին կուիչը», որի նիւթը թրքական բռնապետութեան մէջ տառապող Հայութեան կենսքն է, կոյկասից օգնութեան զնացող երիտասարդների պատկերումը:

Իր գրական-քննադատական գործունէութեան մէջ Թումանեանը արժանի տեղ է յատկացրել արեւմտահայ մշակոյթին: Ինչպիսի՞ սիրով եւ բանիմացութեամբ է նա խօսել եւ գրել Ալիշանի, Գրեբեքի, Պէշիկիշաւլեանի, Աղամեանի ու Գարոնեանի, Մերենցի ու Օտեանի մասին: Թումանեանի մասնակցութեամբ կազմուած «Հայ գրողներ» հասցեալովի մի ամբողջ մեծադիր, հոյակապ հատոր նուիրուած էր արեւմտահայ զբաղանդութեանը: Դա կոյկասահայ իրականութեան մէջ ստալին այդպիսի ժողովածուն էր, որը ցարսօր պահպանում է իր ճանաչողական եւ դիտական արժէքը:

Մեծ բանաստեղծը ցաւով էր նկատում

արեւմտահայութեան եւ արեւելահայութեան անըմբռնողութեան, իրար լաւ չըճանաչելու փաստերը: Ժամանակակիցները պատմում են որ 1921-ի շնորհիւ, Կ. Պոլսում գտնուած ժամանակ, ներկայ լինելով իր ստեղծագործութեանը նուիրուած երեկոյին, Թումանեանը տխուր ժպիտով ասել է. «Ես այստեղ համոզուեցի, որ ոչ դուք էք մեզ ճանաչում ինչպէս հարկն է, ոչ էլ մենք՝ ձեզ»: Կովկասահայերի կողմից արեւմտահայ գրականութեան վատ իմացութիւնը, եւ ընդհակառակը նա անուանել է «մի անբնական եւ աննորմալ երեւոյթ, որը վերացնելու ստանձին հոգ պէտք է ունենանք»: Եւ բաց անելով իր նախազանգած Հայ գրողների կովկասեան ընկերութեան երեկոյթներից մէկը, որը նըջիրուած էր արեւմտահայ գրականութեանը, Թումանեանն ստուծ էր փոխադարձաբար միմեանց ասելի լաւ ճանաչելու շնորհիւ «մեր առջեւ կը բացուի ազգային հարս-

տութեան մի նոր դանձարան, մեր դիմաց կը յառնեն մեզ ծանօթ, բայց ասելի շատ՝ անծանօթ սաղանդաւոր գրողների դէմքեր, եւ մենք ասելի հարուստ, ասելի ուժեղ եւ ասելի հպարտ կը դրանք զմեզ...»:

Մեր օրերում Թումանեանի այդ իդէը մարմին է առնում ամէն քայլափոխի. մեր ժողովրդի տարբեր հատուածները գնալով ասելի ու ասելի բաւ են ճանաչում միմեանց կեանքը, մշակոյթը, գրականութիւնը: Այդ մեծ գործում Թումանեանի ստեղծագործութիւնն իր ազգային անխարդախ ոգով, իսկական ժողովրդական հայրենասիրութեամբ եւ մարդասիրութեամբ օգնում է աշխարհով մէկ ցրուած Հայութեանը հոգեպէս միաւորուելու, պահպանելու իր ինքնութիւնը, դասնալու ասելի ուժեղ, իր ազգային հարստութիւններով հպարտ:

Եւ թող մեր ժողովրդի վրայ մշտապէս թեւածի Ամենայն Հայոց Բանաստեղծի միաւորող պայծառ ոգին:

ԵՂՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵՆԸՆ

Երեւան

